ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

13.11.2018
340-34

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ընդհանուր բյուջեի չափը 2014, 2015, 2016 , 2017 և 2018 թվականներին:
2. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական աշխատողների միջին աշխատավարձի չափը 2014, 2015, 2016, 2017 և 2018 թվականներին (սեպտեմբերի 1-ի դրությամբ):
3. Համալսարանի՝ գիտական կոչում ունեցող աշխատակիցների թիվը 2014, 2015, 2016, 2017 և 2018 թվականներին (սեպտեմբերի 1-ի դրությամբ):
4. Համալսարանի՝ գիտական կոչում ունեցող այն աշխատակիցների թիվը, որվքեր ազատվել են աշխատանքից 2014 թվականի սեպտեմբերի 1-ից հետո: Նշեք՝ նրանցից քանիսն ինչ հիմքով են ազատվել աշխատանքից:
5. Համալսարանի հրատարակվող գիտական հանդեսների թիվը 2014, 2015, 2016, 2017 և 2018 թվականներին (սեպտեմբերի 1-ի դրությամբ):
6. Համալսարանի ստացած հավատարմագրությունների ցանկը 2014 թվականի սեպտեմբերի 1-ից 2018 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան